ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԼՂՀ ֆինանսների նախարարության 2016 թվականի հոկտեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2016 թվականի տասն ամիսների ընթացքում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 24556.1 մլն դրամ՝ պլանավորված 24500.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 0.2 %-ով կամ 56.1 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 0.3 %-ով կամ 69.9 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 87 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 5 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 36 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 130.1 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ: Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 81 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 62-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 6-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման կանոնների պահպանման, 5-ը՝ ապրանքանյութական արժեքների մնացորդի ուսումնասիրության, 4-ը՝ պիտանիության ժամկետը լրացած ապրանքների դուրսգրման գործընթացի և 4 այլ ուսումնասիրություններ:

«Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի» հայեցակարգի շրջանակներում բացահայտվել է ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման 4 դեպք և պարտադրվել դրանք իրականացնող ֆիզիկական անձանց դադարեցնել ապօրինի գործունեությունը մինչև համապատասխան պահանջների ապահովումը:

Հաշվետու ամսում ավարտվել է 2 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 489.6 հազ. դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 82 վարչական գործով սահմանվել է 995.0 հազ. դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 8087 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 6223:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 29 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 107 վարձու աշխատողի՝ 18.1 մլն դրամի չափով:

Նախարարության մեկ աշխատակից մասնակցել է Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության (ՀՄՆԿ-IOTA) կողմից Նիդերլանդների՝ Ուտրեխտ քաղաքում «Լայնածավալ տեղեկատվության արդյունավետ օգտագործումը և վերլուծությունը, որպես հարկային մարմնի խնդիր» թեմայով սեմինարին, ևս երեք աշխատակիցներ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

ՀՀ և ԼՂՀ հարկային մարմինների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 44 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Ֆինանսների նախարարի հրամանով փոփոխություն է կատարվել «Հարկային մարմնի կողմից հավաքագրվող հարկատեսակների և այլ պարտադիր վճարների հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման համակարգի ներդրման ժամանակացույցում»:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

2016 թվականի հոկտեմբերի 21-ին՝ ԼՂՀ Նախագահի հրամանագրով, ԼՂՀ ֆինանսների նախարարի տեղակալ, հարկային ծառայության առաջին դասի ավագ խորհրդական Արթուր Իվանի Հարությունյանին շնորհվել է Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի պետական խորհրդականի դասային կոչում:

Հաշվարկ-հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման գործընթացում հարկ վճարողներին աջակցելու նպատակով ֆինանսների նախարարի 27.09.2016թ. N 459 հրամանի համաձայն շարունակվել են հարկ վճարողների հետ «Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների լրացման և հանձնման ընթացակարգեր» թեմայով ուսուցողական դասընթացները:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 264 ելքագրվել՝ 125 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 11 գրություն: